ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 586-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2017.06.09/36(1311) Հոդ.590	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	01.06.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	02.06.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հունիսի 2017 թվականի N 586-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Կ. Կարապետյան**

2017 թ. հունիսի 2
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 1-ի N 586-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների (այսուհետ՝ դիվանագիտական ներկայացուցչություններ) ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Դիվանագիտական ներկայացուցչությունների ցանկերը (այսուհետ՝ ցանկեր) և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

3. Ցանկերը ներառում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ դիվանագիտական ներկայացուցչությունների անվանումները:

4. Ցանկերում կատարվող փոփոխությունները ներառում են այդ ցանկերում արդեն ներառված տվյալների հետ կապված փոփոխություններն ու լրացումները:

5. Ցանկերը և դրանցում կատարվող փոփոխությունները հարկային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ փաստաթղթաշրջանառության (Mulberry) կամ այլ համակարգի միջոցով՝ համապատասխան համակարգչային ծրագրի ձևաչափով (Microsoft Excel):

6. Յուրաքանչյուր տարվա համար ցանկերը սույն կարգին կից N 1 ձևին համապատասխան ներկայացվում են մինչև տվյալ տարվա հունվարի 15-ը ներառյալ:

7. Յուրաքանչյուր տարվա համար ներկայացված ցանկերում կատարվող փոփոխությունները սույն կարգին կից N 2 ձևին համապատասխան ներկայացվում են յուրաքանչյուր փոփոխության կամ լրացման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ

Վ. Ստեփանյան

Ձև N 1

Ց Ա Ն Կ

20__ ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Դիվանագիտական ներկայացուցչություններն ըստ բաժինների (դեսպանություններ, հյուպատոսություններ, ներկայացուցչություններ և այլն)	Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության նկատմամբ փոխադարձաբար ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափ կիրառելու վերաբերյալ նշում (✓)
1	2	3
1.		
1)		

2)		
2.		
1)		
2)		
…		

Ձև N 2

Փ Ո Փ Ո Խ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

20__ ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ

NN Ը/Կ	ՓՈՓՈԽՎԱԾ ԿԱՄ ԼՐԱՑՎՈՂ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ)	ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԼՐԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1	2	3
1.		
1)		
2)		
2.		
1)		
2)		
…		